



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 13

ՀԱՅԿԱՐԱՐ

24 ՆՈՅԵՄԲԵՐ 1907

ԱՊՂՑՆԱԿԱՐԳ ԺԱՄԱՑՈՑՆԵՐ

ԶԵՆԻՐ

ԱՊՂՑՆԱԿԱՐԳ ԺԱՄԱՑՈՑՆԵՐ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՈՒՅԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.

Պաշտ-Գարու, Օռդա-Պաք հաստատութեան շէնքի 16

(A. Asadourian) شرکت صتییه مطبعه سی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի հաստատութիւն 52

Հատը 40 փարս



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
փանգամայն մեքենաներ
զը գտնուին

Ձեռքի մարդ Սինկերի մեքենան կը գտնէ :

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՇԱՐԺԱՔԱՆԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|--------|--|
| ՌԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| ԿԱՆԱԹԱ | (2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիւէին դէմ . |
| | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ | Զարը Պոյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզզուլուի տունը :



ՐԵԻԵԼՔ ՕՐԱՆՈՒՄ

Թերթ ազգային, գրական եւ քաղաքական :
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլսոյ համար 80 դր. . վեցամսեայ 45 դր. . Գաւառներու համար տարեկան 108 դր. . վեցամսեայ 60 դր. . եւ օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. . վեցամսեայ 20 ֆր. . Ձեռքէ վաճառում՝ քաւր փառա : ԱՐԵԻԵԼՔ հրա լարակ կ'ըլլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով :

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ եւ իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ :

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար : Ծանօթ Դէմքեր եւ կրքեմ ալ տեսարաններ : Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւայլն :

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագին պէտք է ուղղել Տէր և Տնօրէն Գարեգին Էֆ. Պոյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մամուլի ճատտէսի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը :



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 13

ՇԱՐԱԹ

24 ՆՈՅԵՄԲԵՐ 1907

ԳԼԽՈՒՍ ԵԿԱԾՆԵՐԷՆ

Գրեց՝ ԵՐ. ԹՕԼԱՅԵԱՆ

I

Երկուքս ալ դպրոցական ընկերներ, մի եւ նոյն գրասեղանին վրայ բանդալոննիս մաշեցուցած էինք և կտոր մը չոգուլայի համար՝ իրարու գլուխ պատռած քանի՜ անգամներ։

Մի եւ նոյն աղջկան հետ սիրարանած և իրարու նամակներուն փոխադարձ թղթատարը եղած էինք։

Ո՛ր մանկական տարիներ, ուր մեր գեղունակները հաժսոյրի մը համար կտորմիր ոսկիներ չէին պահանջեր մենք։

Զարմանալի բացառութեամբ մը, դպրոցէն դուրս ալ շարունակեց մեր բարեկամութիւնը, մինչ սովորութիւն է որ՝ դպրոցական մտերիմները երբ մէյ մը վարժարանին սեմէն դուրս ոտք նետեն, ալ իրար չբարեւեն երբէք։

Բարեկամս կարգուեցաւ, — երկու գլուխ, չորս ոտք եղաւ։

Կնիկը՝ «մեռելները խնդացնող» աղջիկ մըն էր, հին ահուայի ցաւ մը, որուն պատշգամբին տակ տարիներով սպանիացի սիրահարներու տմբողջ դասընթացքը բոլորած էր կիթառի ձեռին։

Իրար կը հոտուրտային՝ ինչպէս Պօղ եւ Վերգիլէն, Բուէօ եւ Փիլիիքը, Տաքնիս եւ Գլոքն։

Գո՛նէ ա՛յնպէս կ'ենթադրէի այն պատահական այցելութիւններուն պահուն՝ զորս կուտայի իրենց՝ ամուրիի կեանքիս անապատային պարապութեանը մէջ գոնէ ընտանեկան կեանքի ովասիսային անուշութիւններուն հեռուէն հեռու քսուրդատելու համար, — ինչպէս անօթի կատու մը՝ կաղանդի սեղանի մը բոլորափքը։

Բարեկամս մանաւանդ կը խենդենար իր կնոջը համար և որովհետեւ խենդենալը երբեք աղէկ բան մը չէ, բարեկամս ալ խենդենալով՝ աղէկ բան մը չէր ընէր։

Օրին մէկը սակայն դգացի թէ կինը ա՛յն-
չափ անկեղծութիւնով չէր փխտարիներ կ'ը
իր ամուսնին սիրոյն:

Օ՛հ, այո՛, կը խաբեր կոր դայն, անպի-
տանը:

Բայց բացէ ի բաց կը խաբէր, հրապարա-
կաւ, առանց ըրածէն քաշուելու և կարծես,
ո՛հ, Աստուած իմ, էրկանը գիտակցութիւ-
նովը:

— «Արդեօք Վահրամը տեղեմէ է գոր-
ծին», հարցուցի ինքնիրենս:

Սակայն չէ՛, Վահրամ չէր կրնար ա՛յնչափ
գեանաքարչ արարած մը ըլլալ, ո՛հ, չէ՛...

— Բարեկամ մը որու հետ կտոր մը շոգոլայի
համար իրարու գլուխ պատռած էինք ...
allons done!

Նախ ջանացի համբերել, Պիղատոսի՞ հե-
տեւորութեամբ ձեռքերս լուալով,

— Աղբա՛ր, ինծի ի՛նչ, ամենուն գործին
խառնուելու ի՛նչ իրաւունք ունիմ:

Բայց խիղճիս ձայնը — որովհետեւ կարգ
մը ժարգոց քով դու այս Պիթպաղարեան
հնութիւնը գոյութիւն ունի — անհանգիստ
կ'ընէր զիս:

— Չերթա՞ս բարեկամդ զգուշացնել, չե-
րթա՞ս անոր ցուցնել այն անպատուութեան
անդունդը ուր պիտի գլտորի, ասանկ բա-
րեկամութիւն կ'ըլլայ ...:

Խիղճիս ձայնին անսացի ... ապուշօրէն:
Գացի գտնել բարեկամս և մէկդի քաշե-
լով,

— Սիրելի՛ս, գիտես թէ քեզի որչա՛փ
կը սիրեմ ...

Վահրամ երեսս կը նայէր վարմացած:

— Ըսելիքս շատ լուրջ է և խնդրեմ ...

— Խօսէ՛, զիս մի՛ սարսափեցնէր, ըսաւ
անս:

— Բարեկա՛մս, աւելցուցի չիտկէ չիտակ,
կնիկդ քեզի վատօրէն կը խաբէ կոր:

Վահրամի աչքերը բացուեցան:

— Կրնամ քեզի ապացուցանել, սիրահա-
րին անունն ալ գիտեմ ...

Կարծես Վահրամ շանթահարուած էր:

— Մե՛ղք է քեզի, սիրելի՛ս, ասոր մէկ
ճարը նայէ՛ խաղկուխայտառակ չեղած:

Վահրամի աչքերը թրջուեցան և արցունք-
ները սկսան վազել՝ քիթին երկու կողմին
ակոսիկներէն դարձար:

— Ինչո՞ւ այս բանը ինծի իմացուցիր,
հօծեց յանկարծ:

— Որովհետեւ, որովհետեւ ... Կակա-
զեցի՝ չգիտնալով ի՛նչ պատասխանել և յան-
ցանք մը գործած մարդու մը պէս ամօթա-
պարտ:

— Ինչո՞ւ կնկանս անհաւատարմութիւնը
ինծի իմացուցիր, պուռաց Վահրամ մէկէն ի
մէկ:

— Որովհետեւ այս կերպով բարեկամա-
կան պարտականութիւնս կատարած ըլլալ
կարծեցի, կմկմացի միամտօրէն:

— Ի՛նչ հարկ կար իմ չգիտցած մէկ զըժ-
բաղդութիւնս ինծի հաղորդել՝ ամբողջ եր-
ջանկութիւնս խանդարելով:

— ? ? ?

— Ես կնկանս հետ շատ երջանիկ կ'ապ-
րէի և բանէ մը չէի տեղեակ. և հիմա դուն
կուգաս դժբաղդութեան, կուիւի, անհամա-
ձայնութեան աղէտալի սերմերը ցանել մեր
մէջ:

— Բայց խիղճիս ձայնը ...

— Գեանին տա՛կը անցնի խիղճիդ ձայնը,
որ ասոր անոր գործին կը խառնուի, երբ ի-
րեն բան մը հարցնող չկայ և աս ու ան դըժ-
բաղդ կ'ընէ: Խիղճիդ ձայնը կը պահանջէր
ձայն չհանել: Ահա՛ դիմացդ մէկը, որուն մե-
ծագոյն գէշութիւնը ըրիր աւանակօրէն ...

— Կ'աղաչեմ, Վահրամ ...

— Ծօ՛, քեզի ի՛նչ թէ կնիկս զիս կը
խաբէ թէ ոչ, — աւելցուց բարեկամս՝ ա՛լ
աւելի զայրացած — քեզի ի՛նչ թէ իմ կնի-
կըս զիս կը սիրէ թէ ոչ, ես անոր սիրոյն
սաստկութեան, անոր հաւատարմութեան հա-
մոզուած էի, դուն եկար ի՛նչ ըրիր, կհանքս
թունաւորեցիր ...

Կը հեծկտար խեղճ բարեկամս:

Ես ալ սկսայ հեծկտալ:

— Ներէ՛, սիրելի բարեկամս, ներէ՛ ...

— Չէ՛, դուն ապուշ մըն ես, վճռեց ան՝
բարկացած, կենցաղագիտութիւն ըսուած
բանը քովդ ամենեւին չկայ, ի՛նչ պիտի ըլ-
լայ արդէն, ա՛յնպիսի կիներու հետ ժամա-
նակ կ'անցընես կոր ո՛ր ...

— Կ'աղաչեմ, Վահրամ, կարգ մը պար-
կեշտ կիները այս գործին մի՛ խառնէր ...
Եթէ գիտնայի որ ...

— Եթէ գիտնայիր որ քու այդ յայտա-
բարութեանդ վրայ ատրճանակս չպիտի պար-
պէի կնոջս վրայ, եթէ գիտնայիր որ այս
բարեկամութեանդ համար քեզի շնորհակալ
պիտի չըլլայի, այս ինքիւզաբութիւնը չպիտի
ընէիր... Պարոն, ես ասանկ բարութիւններ,
ասանկ բարեկամութիւններ չեմ ուզեր. ամէն
ճշմարտութիւն չըսուիր: Դո՛ւրս ելէք ասկէ
և մէյմըն ալ հոս մի՛ հանդիպիք:

Չարագործի մը նման կծկեցի:

Վնասուած էի ամենամտերիմ բարեկամիս
տեսնէն, աղբարկկի՛ս տունէն, որովհետեւ
խիղճիս ձայնին... անասցի:

Անկէ ի վեր Վահրամ, սիրելագոյն բարե-
կամս, մեծագոյն թշնամիս եղաւ:

Այս բանը դաս մը եղաւ սակայն ինծի:

Ա՛լ ոչ ներքին ձայնիս կ'անսամ, ո՛չ ալ...
արտաքին ձայնիս:

Խիղճին ձայնը... զի՛ւթ:

Ու, եթէ, օրին մէկը, իմ կնիկս ալ զիս
խաբելու ըլլայ, և եթէ խիղճիս ձայնը նո-
րէն զիս տանջէ, դարձեալ ոչի՛նչ պիտի զրու-
ցեմ... ինքզինքիս:

Որովհետեւ... ինքզինքիս հետ ալ գէշ
մարդ ըլլալու ժամանակ չունիմ:

II

Հոռոմ դերձակ մը ունէի, ուրկէ շատ
զո՛ւ էի, թէեւ չեմ գիտեր թէ անիկա նոյն-
չափ զո՛ւ էր... իմ վճարումներէս:

Մանկապարտէզի կարմիր գոգնոցը կը ու-
նակէս հանկէս ի վեր մարդը զգեստ կը կա-
թէր ինծի և մարմնիս տձեւութիւնները ա՛յն-
չափ խորապէս ուսումնասիրած էր որ, յա-
ճախ ինքզինքիս մասին յաւակնութիւններ
կ'ունենայի հայելիիս առջեւ, մոռնալով բո-
լորովին թէ՛ զիս մարդու կարգ անցընողը
մեր հոռոմ դերձակն էր:

Սակայն, մեր բարեկամը Արիստոյի, բը-
նաւ հազ չէր ընէր դերձակէս, որովհետեւ
ապառիկ զգեստ չէր կարեւր իրեն:

Շարունակ կուգար գլուխս արդուկել:

— Եղբա՛յր, կը կրկնէր, իշթէ մենք ա-
սա՛նկ ենք, բնաւ միտիները չենք քաջալե-
բեր, կ'իրթանք մեր փարմաները յոյներու,
հրեաներու ափը կը լեցնենք, մինչդեռ չսլիտի
տեսնաս յոյն մը որ գայ քեմէ լուցկի մը գը-

նել, ի՛նչ ըսեմ. օտարասիրութիւնը մեր ծու-
ծը մտեր է: Ի՛նչ հոռոմ դերձակիդ պոչէն
բռներ կ'երթաս. աշխարհիս երեսը հայ դեր-
ձակ չկա՛յ... Ամօ՛թ քեզի, թո՛ւն, թո՛ւն,
թո՛ւն...:

Արիստոյիմ բարեկամս ա՛յնչափ գլուխս չի-
նեց, ա՛յնչափ, ա՛յնչափ որ վերջապէս պար-
տաւորուեցայ համակերպիլ:

— Է՛հ, հայ դերձակի մը տա՛ր նայինք
զիս, ըսի, բայց մէջէն խանութ չ'անեմ...:

Չա՛փ չկար բարեկամիս ուրախութեան:

Կարծես դերձակը իր երկրորդ պապան էր:

Շուկային մէջ՝ Եփնի-գաբուցի դերձակի մը
առաջնորդեց զիս:

Կարծեմ նոր դերձակիս անունը Սահակ էր
կամ Կոպեռնիկ:

— Այս անունով դերձակ մը ինչպէ՛ս կըր-
նայ վայելուչ զգեստներ կարել, առարկեցի
թերահաւատութեամբ:

— Նորէ՛ն օտարասիրութեան, բացաքանչեց
Արիստոյիմ, հապա կ'ուզես որ դերձակիդ ա-
նունը անպատճառ Տիմիթրաքի կամ Երկա-
քի՛ ըլլայ, այն ատեն վայելուչ պիտի կարէ:

Չգացի առարկութեանս ապուշութիւնը:

Կողերնիկ կամ Սահակ (դերձակներուս ա-
նունովը interesser ըլլալու ժամանակ չունիմ)
արգահատական ձեւով մը վրաս-գլուխս նու-
յեցաւ:

— Յը՛ք ջը՛ք ջը՛ք... ըրաւ ակամե-
րուն մէջէն:

— Ի՛նչ կայ, հարցուցի:

— Հագած զգեստնիդ ընա՛ւ ձեզի չվայ-
լեցուցի, ինտո՛ր կրնաք այս տեսակ զգեստ-
ներով փողոց ելլել:

Ինքզինքէս ամօթահար՝ մէյ մը վրաս-գը-
լուխս նայեցայ, և իրօք շատ արգահատա-
կան գտայ վիճակս:

— Յը՛ք ջը՛ք ջը՛ք, յարեց նոր դերձակս,
եթէ մենք այս տեսակ զգեստներ կարենք,
վաղը իսկ խանութնիս գոցելու է:

Ինտո՛ր եղեր է որ հոռոմ դերձակս ա՛յն-
չափ տարիներէ ի վեր աչքերս չլացուցեր է...
Վա՛յ անպիտանը:

— Սա՛ բանդալոնին վիճակին նայեցէ՛ք...
Սա՛ ժաքէթին տգեղութեանը նայեցէ՛ք...
Սա՛ ժիլէթին ողորմելիութեանը նայեցէ՛ք...:
Խա՛չ որ, ամօթէս գետնին տակե՛րը կ'անց-

նէի կոր՝ առանց թիւնէլ նստած ըլլալու՝ հայ գերձակիս առջեւ, որ կատարեալ իրաւունքը ունէր զիս իր նախասինքներուն տակը ջախջախելու:

— Մե՛ղք, մե՛ղք ձեր դրամի՛ն, ձեր ճաշակի՛ն ... կը դամբանախօսէր մարդը:

— Բայց, նկատեցի՝ արդարացումի եղանակ մը փնտռելով, ձեր հագածն ալ խրոխտ բան մը չէ՛:

— Ատոր մի՛ նայիք, մենք դերձակ ենք, դերձակը իր վրան-գլուխը չընեն, կ'ըսեն:

Վերջապէս, Եէնի-գաբուցի Միռ մը գլուխով ըլլալու համար երջանիկ, երեք զգեստ մէկանց ապսպրեցի անոր:

Գետնին տակը անցնէր հոռոմ դերձակս:

Ո՛հ, ի՛նչ ըսեմ ես մեր օտարասիրութեան:

Արիսողոմ բարեկամս կը ճառագայթէր յանուն ... համայնքասիրութեան:

Տասնու՛թը անգամ փորձի գացի հայ դերձակիս:

— Հոգ չէ՛, մարդը առաջին անգամ ըլլալով ինծի զգեստ պիտի կարէ, ըսելով՝ արդարացուցի զայն և մխիթարեցի ինքզինքս:

Իրիկուն մը, տուն վերադառնալուս, ժեզ-թնկին վրայ փռուած գտայ երեք նոր լաթերս:

Ա. ը հագայ ... Ա՛խ, Աստուածս, ի՛նչ աղանդակութիւն:

Բ. ը հագայ ... Ա՛խ, Տէ՛ր իմ, ի՛նչ սարսափելիութիւն:

Գ. ը հագայ ...

Բայց, վրաս մարելիք եկաւ:

Երեքն ալ տնտեսութեան, անճաշակութեան, խայտառակութեան բարբարոսային հրաշալիքներ էին:

Վա՛յ անախտան Արիսողոմս:

Վա՛յ անպիտան Կոպեռնիկ կամ Սահակ:

Օտարասիրութիւն, հէ՛:

Աստուածնիդ սիրէ՛ք, ի՛նչ յանցանք ունէր իմ հոռոմ դերձակս:

Եթէ անոր միակ յանցանքը՝ Հայ. Առաքելական Եկեղեցիին չպատկանիլն էր, ես պո՛ղ պո՛ղ կը ներեմ ասիկա իրեն, քանի որ ինծի ա՛յնչափ ճաշակաւոր զգեստներ կը կարէր:

Ես զգեստ պիտի հագնիմ, և ո՛չ ... մարդուն կրօնքը:

Հետեւեալ առտուն Արիսողոմ դէմս ելաւ:

— Կօշկակարդ հայ է, հարցուց առջի բերան:

— Ո՛չ, հրեայ, պատասխանեցի:

— Ա՛խ, օտարասիրութիւն, ա՛խ ... ես քեզի հայ կօշկակար մը ներկայացնեմ ո՛ր ...

Վստահ եղէ՛ք, Արիսողոմ բարեկամս խաճային բան չը չիջեցուցի:

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

ՁԻԿ-ՁԱԿ ՆՕԹԵՐ

— *harsbanc* կիներ ընդհանրապէս նախանցոց կըլլան եւ մեծ յաւակնոց իրենց գեղեցկութեան վրայ, իսկ քուխեր աւելի կարեկից ոգի մը կը կրեն, բոլս սիւրս կըլլան եւ խղճահար:

— Կնոջ իսեալը մամոնան է, իսկ ուսուցիչը սասանան:

— Ամեն կի՛ն դիւրաւ կը սանձուի, զանոնք *mort aux dents* վիճակին հասցնողը *sqks* ամուսիններն են:

— Եթէ այլ մարդը իր հոգեվարքէն մինչեւ մահը տասը վայրկեան կը տեսէ, կիները երկու ժամէն հազիւ հոգի կուտան, այնքան չեն ուզեր բաժնուիլ փառանքոյնեան լեցունք այս աշխարհէն:

— Կիները կասուններու պէս մուքին մեզ աւելի լաւ կը տեսնեն եւ անոր համար է որ ամեն երեսնուն խնդացողի չեն ժպտիր:


— Պննասէր տիկնոջ մը օր մը ըսին. «ամուսինդ մեռաւ» սկսաւ դառնապէս լալ: Օր մ'ալ զաւկին մահը գովեցին. հեծկցաց, ուրիշ օր մը եկան ըսել որ «ամբողջ հագուստներուդ *hans* ոտքը բռնկեցաւ» ... խելքը բռցուց:

— Հաշիւ եղած է որ զեխ կի՛ն մը ուսեսի համար տարին 30 ոսկիի ծաղխք մը կը պատահուի իր ամուսնոյն, իսկ քուլաթի ... 300:

— Այլ մարդիկ են որ բաղդը կը հալածեն, իսկ բաղդն է որ իր կարգին կիները կը հալածէ:

PHILOSOPHY

ՔՐՈՆԻԿ



ԿԻՐԱԿԻԻ
ՔՕՆՍԵՐԵ

Ահա ՄԱՐԴԸ, որուն համանուն վարժա-
լսանին ի նպաստ, ա՛յնքան փայլուն, ա՛յն-
քան արդիւնաւոր կերպով սարքուցաւ Կի-
րակիի նուագահանդէսը Բերա Բըթի-Շանի
ձմեռնային թատրոնին մէջ:

Պէրպէրեան կրթական տանիքին տակ ա-
շակերտող նախկին սաներուն, գեղեցկօրէն
մտածած և հիւսած այդ ցերեկայի՛քը, որուն
նպատակն էր հասցնել Մեծ Ուսուցչա-
պետին օրինակելի տիպար կրթարանին նիւ-
թական ձեռնտուութիւն մը, սպասուած ար-
գիւնքը տուաւ պէտք է ըսել, չնորհիւ այն
տրտաբուլի վերաբերումին՝ զորս ցոյց տուաւ
համայնքը:

Յաւէտ ողբացեալ Ռ. Յ. Պէրպէրեանի
մահէն ի վեր մեր սիրեցեալ Ս. Պատրիարք Հօր
հոգատար կարգադրութեամբ այսօր վարժա-
լսանը կը գտնուի այն niveauին վրայ՝ զոր ձը-
գեց հիմնադիրը: Եւ ահա սարքուած նուա-
գահանդէսին կոկիկ հասոյթն ալ երբ կուգայ
էթէ ոչ բոլորովին՝ գէթ մեծ մասամբ գոցել
գտնուած նիւթական բացը, կը յուսանք որ
այդ վարժարանը պիտի ըլլայ մեր խոնարհ
հաստատութիւնը, և մենաօրը մեր գործնա-
կան և տուեւորական կեանքին երիտասարդ
մշակներուն:

Ժամը ութին, արդէն երկսեռ հոծ բազ-
մութիւն մը եկած գրաւած էր ամբողջ par-
terre: Օթեակները տակաւ սկսան գրաւուիլ
ծանօթ ընտանիքներէ, մինչ մէկ կողմէն հը-
րաւիրեալներու ստուար բազմութիւն մը
խումբ խումբ իր entréesն կընէր նախապէս
զարդարուած և օդային կաղերով լուսաողող
սրահը:

Կարգադիր Մաննախմբին Պատ. անդամ-
ներէն զատ յատկապէս ցերեկոյթին կարդ ու
սարքին հոգածու խումբ մը բանիւրուն և աղ-
նիւ Պարոններ, ամենայն քաղաքավարու-
թեամբ հիւրընկալութեան պաշտօնը կը վա-
րէին, բոլոր ներկայներուն չնորհակալութեան
արժանանալով:

Ժամը ինն էր երբ վարագոյրը բացուելով
ի հանդէս եկաւ Կեդրոնականի խմբերգը,
բոլորն ալ մաքուր ու կոկիկ հագուած, ու-
րոնք իրենց պետին՝ Ա. զն. Զիլինկիրեան է-
ֆէնտի առաջնորդութեամբ եռաձայն երգե-
ցին ՀԱՄԻՏԻԻ ԲԱՅԼԵՐԳԸ, որուն ամբողջ
ներկայները յոտնկայս ունկնդրելէ վերջ՝ ջերմ
ծափահարութիւններով ողջունեցին:

Նոյն խմբերգը յետոյ խիստ յաջող կեր-
պով երգեց Sous l'ombrage:

Երկրորդ նիւմէսին որոտընդոստ ծա-

փերու մէջ բեմ եկաւ Ադն. Օր. Զապէլ Մի-
նասեան իր վարժ և արագաստ մասներով
զարկաւ Griegի Aux printemps, ինչպէս
նաև Reinholdի Impromptu, յաւարտ այս
երկու զգուարին մի եւ նոյն ատեն գեղեցիկ
կտորներուն, մինչ ժողովուրդը տաքօրէն կը
ծափահարեր, Մանսխմբին կողմէ փառաւոր
ծաղկէքնար մը նուիրուեցաւ իրեն ի պատիւ
իր արժանիքին և տաղանդին:

Յետոյ Վահրամ էֆ. Պոյաճեան երգեց
Apollonի romanceը Ebréo:

Եւ ահա մեծ արուեստագէտը Յարութիւն
էֆ. Սինանեան իր երկու եղբայրներուն հետ
ի բեմ:

Սինանեան եղբայրները կարծես ի յարգանս
մեծանուն Ուսուցչապետին ընտրած էին այն-
պիսի գեղեցիկ մեղմանուչ և զգուարին կը-
տորներ, որոնց ի լուր ժողովուրդը հմայուե-
ցաւ պէտք է ըսել, այնքան որ միւղիքէ չի
հասկցողներն անգամ սկսան ջերմապէս ծա-
փահարել... զարկած կտորին կէսին իսկ,
բան մը որ զժպղզարար կը պատուի ամէն
ատեն:

Յարութիւն էֆ. Սինանեան յանձն առած
էր դաշնակի մասը, ամբողջ քօնսէսին նիւ-
մէ ունեւորուն համար ալ, և որով անգամ մ'ալ
ցոլացուց իր անմրցելի կարողութիւնը ջու-
թակին մօտ՝ դաշնակին ալ:

Մանաւանդ Danse Slaveը որ իր alégori-
que դարձուածքներովը ամբողջ ներկաներուն
հաճոյք պատճառեց:

Դադարի միջոցին ամէն ոք իր գոհունա-
կութիւնը կը յայտնէր ներկայ ընտրեալ բազ-
մութեան, կարգապահութեան և organisationի
մասին, մինչ պատրաստ սիկառներու ամպ
մը իր մէջ կը պարուրէր ընդհանուր զուարթ
տպաւորութիւն մը:

Երկրորդ մասին մէջ կրկին խմբեալ, նո-
քէն Օր. Մինասեան, որ այս անգամ Raps-
odie Hongroiseը զարկաւ, կտոր մը որ ամբողջ
այժ, զիւրաշարժութիւն և եռանդ կը պա-
հանջէ, և որոնք կատարելապէս ի յայտ բե-
րաւ շնորհալի օրիորդը, իր սեռին պարծանք
առթելու չափ վարպետօրէն յաջողելով:

Ամէն նուագահանդէս իր clouն կուենայ
անպատճառ, ահա Պէրպէրեան concertի clouն
պէտք է համարել Երուանդ էֆ. Կիւլեանօֆը,

որուն կարողութիւնը իրրեւ amateur՝ անժրի-
տելի է: Զայնի հստակութիւն, կեցուածքի
ազնուութիւն, խաղերու թրթռուն ելեւէջ,
համարձակութիւն, տհա այն էական և ան-
հրաժեշտ պայմանները՝ զորս իր վրայ մարտ-
նացուցած էր Տեար Կիւլեանօֆ, որուն եր-
գած երկու գեղեցիկ կտորներն ալ Un ballo
in Mascheraն և Բալայչիի բուօլսիւ խլացու-
ցիչ ծափերու արժանացան: Երուանդ էֆէնաֆ
Կիւլեանօֆ, իր պատկանած համայնքին և
սեռին պատուարեր artist amateur մըն է, և
դիտաւորութիւն ունի կրկին Բարիկ վերա-
դառնալ իր այնքան սիրած արուեստը, կա-
տարելագործելու համար:

Յետոյ կրկին խմբեալ և վերջ:

ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Թող ներուի ինձ համեստարար դիտել տալ
հոս մէկ քանի մեծ ու պղտիկ անպատեհու-
թիւններ, որոնք կը յուսամ թէ աչքէ չեն
վրիպած:

Ինչո՞ւ մեր Հայ-Լայն դասակարգը որ,
այնքան տաքօրէն կը պատուէ Հիւանդանո-
ցին նուագահանդէսը, անձամբ ներկայ գըրա-
նուելով և զարդարելով ամբողջ օթեակնե-
րը, այս անգամ իր բացակայութեամբ կը
փայլեր, բացի մէկ քանիներէն, որոնք իրաւ
է թէ յարգած էին մեծանուն Ուսուցչին ան-
մահ յիշատակը:

Ինչո՞ւ հոն գտնուող մէկը ուշադրութիւն
չըրաւ թէ՛ Օր. Մինասեանի այնքան նրբ-
բէն զարկած մէկ կտորին ժամանակ բեմին
վրայ կարգաւ վառուած կապերը անագին
աղմուկ մը կը հանէին, և որուն համար յար-
գելի Օրիորդը քանիցս ետին դառնալով կը
նայէր. և հասկցնել կուզէր այդ անախորժ
accompagnementը:

Ինչո՞ւ կարգ մը վաճառականներ, որոնք
չէին հաճած ներկայ գտնուիլ և տոմսակները
իրենց երրորդական և չորրորդական emble-
yօսներուն տալով հանդերձ, անոնց չէին
պատուիրած որ բալթօեով, ցիխոտ լաստիկնե-
րով և Ռօպէնսօնական լայնատարած հովա-
նոցով չի գան չի բազմին ֆօթօֆօներու վրայ...
անկուտի և տանկուտի:

Ինչո՞ւ նոյնիսկ վարժարանի աշակերտներ
պատշաճութիւնը մէկ կողմ նետելով para-

միտն պոռագին կիւլեանօֆ ... և որով շա-
տեր հրդեհ կարծելով՝ շուարեցան և պահ մը
ընդհանուր խուճապ մը տիրեց սրահին մէջ,
ինչպէս կը պատահի caffè chantantներու մէջ:

Ինչո՞ւ Տիրան պէյ Ալիքսանեան հակառակ
իրեն եղած աֆնքան ջերմ հրաւերին՝ մերժեց
իր մասնակցութիւնը, գէթ մէկ կտոր բան
զարնելու ի պատիւ Պէրպլերանի, վախճալով
որ քսան հոգի պակաս կըլլար իր ֆոնտէնին
և նիւթապէս ալ տուժած: Արուեստագէտը
ընդհանրապէս խաբխիւիտ կըլլան գիտէինք,
բայց լաւ է ըսել ... économete:

Ինչո՞ւ Ակայեան էֆ. (tenor) չի յօժարե-
ցաւ իր աֆնքան գեղեցիկ ձայնով մասնակցել
սօլօ մը երգելով, որուն համար մեծապէս
գոհ պիտի ըլլային ամբողջ ներկայիւնը,

Ինչո՞ւ ամբողջ Պէրպլերան ստանալէ չե-
կայ չի գտնուեցան, և ընդհակառակը զըր-
կուեցան իրենց պաշտելի ուսուցչին ի պատիւ
սարքուած այդ նուագահանդէսէն, մինչդեռ
բառատին պարապ կը կենար:

Ինչո՞ւ Օր. Գալանօզեանին ալ հրաւեր
չեղաւ, որպէս զի ինքն ալ մասնակցի ոյս
տոնմիկ և նուիրական հանդէսին, այն փափ-
կանկատ Օրիորդը որ Մարկեան հանդէսին իսկ
չէր ուզած մերժել իրեն եղած թախանձա-
գին հրաւերը:

Վերջապէս՝ ինչո՞ւ սինէմաթօկոսֆի մի-
ջոցաւ մեր մեծանուն Ուսուցչապետին պատ-
կերը չի ցոլացուեցաւ բէմին վրայ, բան մը
որ շատ դիւրին էր և շատ խորհրդաւոր պի-
տի ըլլար:

Եւ որ աւելին է ... արդիւնքը գոհա-
ցուցիչ:

Վ. Փ.

Գ Ն Ա Շ Ա Տ Ա Կ Ա Ն

Արեւելք՝ լուրջ և տիպար օրաթերթը,
որ երբեք չի դադարիր գնահատելէ Հանրա-
գիտակը, մեր շնորհակալութիւնը կը փու-
թանք յայտնել այն անկողմնակալ տողերուն
համար՝ զորս հաճած էր նուիրել իր Զորեք-
շաբթի օրուան Մամուլին շուրջ խմբագրա-
կանին մէջ:

SYMBOLIQUE ՏՈՂԵՐ

Գ Ի Շ Ե Ր Ը

Մօսա գրիչներուն

Անկոխի է նամբան մենիկ դաւսերուն.

Կը փախի, հեռուն՝

Լոյս մը գիցով երեւուն

պատածակէն կուտայ ցոլ:

Կը փախի, բայց ահա տես

ձիւղ փոփա,

Հա՛վ, հա՛վ, ձայն մը կուգայ կոտ,

Վախես սմուս՝ կըսեմ «ո՛ւտ»

Բայց անպիտան անարբեր՝

Նմաններուն կուտար յոխորդ, հրաւեր,

Որո՞նք բռնած պար մը խենդ խօլ, կը հալ-
հալէն,

Մինչ դողահար մը փնտում ապաւեն

Շուտուտիւնով ահուսարսափ մեջ դողի

Քալիքս ֆերդոդի,

Անդիէն՝

Երկխրոկուծի ձայն մ'ալ կուգայ ականջիս,

Որո՞նք պօռաս, որո՞նք փակչիս.

Կը վախճամ.

Ո՛ւր էք, Հիւկօ, դո՛ւ Լամարդին, Միլլուա,

Տիե՛հ, տիե՛հ, չուա՛ չուա՛

Հեզ ետերին երկնասլաց ականջով,

Որո՞նք այսպէս գիշերով,

Եաբունեքէն՝

Ըհհ, դեպ ի վեր մոլորները կը կրեն:

Վախք սոսիս, մութն աչքերուս, փոսն ալ
ոսիս սակ,

Անգոյագոյն մը մնամ, բայց, սը՛տս, դակ դակ

Փառք քեզ Տե՛ր, պէհինն ահա գիշերին.

Հէ՛յ, պէհին պապա կաղաչեմ,

Եաանպնի չեմ,

Սեւամարգէն Պաղլար Պաշի պիտի երբամ

Մեծ Թէյգէիս Անթառամ:

Բերտ

ԳՆԱՇԱՏԱԿԱՆ



ՔՕՆՍԵՌԻ ՃԸՎԸԼԴՈՒՔ

[ԿՈՄՍՑՑՈՆԻ ԶԱՆԱԶԱՆ ԲԼԱՔՆԵՐ]

Սկիւտարցիները հալկանին առին պէտք է ըսել, այր, կին, երիտասարդ, օրիորդ և պատանի, սարքուած Պէրպէրեան նուագահանդէսին, որուն շնորհիւ կամ առթիւ, որը որ կուզէք, կրցան իրենց ձմեռուան ճիճիները ցուցադրել յաչս Բերացիներուն և ի պարծանքս Սկիւտարի պէս ճաշակաւոր(․) գիւղաքաղաքի մը:

Երբ այս տողերը կը գրեմ, դեռ աչքիս դէմն են, կամ քովէս կ'անցնին և կամ քայլ առ քայլ ետեւէս կուգան անոնք, մօտիւսիներու բուքներու պէս հագուած տիկիներ, իրենց քուլիք s'իվիւովը, օրիորդներ՝ իրենց չաբֆինաքի գլխարկներով, և միւսիւններ՝ ուրոնք կարծես քօլաի մէջ թաթխուած ելած ըլլալին, այնքան ցիւք, այնքան ուղիղ քալուածքներով, որպէս զի մի գուցէ ուրաստ տափառնին ծունգի տեղ ընէ, և կամ բալթօներնուն կուսոն աւուրի: Զիւթ ... մենք ալ ճաշակ ունինք, մենք ալ կրնանք կոտորտուիլ, դերձակին կամ մօտիւսիին, ըսել տալու համար այն անտարբեր բեռօքներուն, որոնց զրօսանքի նիւթ կը մատակարարէին ... զաւլալները:

Չեմ գիտեր ինչո՞ւ մեր հայ կիները և օրիորդները երբ թատրոն կամ քօնսէն մը գտնուին՝ հիյեթ դուրս կելլան, կը կորսնցնեն իրենց բնականութիւնը և ... բանականութիւնը, և կըլլան մէկմէկ խամաճիկներ, և կամ կը մօտենան Պօն Մառշէի պէպէքներուն այն սուղ տեսակին, որոնք ճոխ հագուած ըլլալով՝ միայն աչքերնին կը բանան կը գոցեն:

Բայց մէկ կողմէն ուրախ եմ որ մերկաները, այսինքն հայ եկեղեցւոյ աղջիկները այսպէս կ'ըլլան միշտ, հապա հակառակ պարագային՝ եթէ լեզուանիութիւն փորձել ելլային՝ ինչ պիտի ըլլար մեր վիճակը յայտատարներուն, որոնք ասեղին ծակէն կը դիտեն ամէն բան:

Եթէ պիտի շատ ունիք սիրելի քոյրերս և պաժպալ ամուսին կամ հղբայր մը, ուղածնուդ չափ ձեր արտաքինին ոյժ տուէք, կապկեցէք օտար հագուստներն ու կապուստները և հարուստները, բայց ոտքերնիդ պագենեմ (քաւ լիցի) բերաննիդ մի բանաք կարծիք յայտնելու այնպիսի բաներու վրայ՝ որոնք ձեր ուս ֆանէլասի միսօներէն շատ ու շատ վեր են՝ ինչպէս թատրոն և քօնսէն:

X

Հաւատացէք, կիրակի օրը կէս օրին, թիւնէլով վարժուողը՝ թռանվայ նստեցաւ, թռանվայ նստողը՝ կառքերու մէջ բաղմնցաւ, և կառքով ելլալու սովորութիւն ունեցողը՝ չեմ գիտեր թէ օթոմօպիլ գտա՞ւ, ֆըշ...շ...շ գըթի Շանի առջեւ հանդիսաւորապէս վար իջնալու համար:

Սըլանտիտ չորս անգամ մաքառօնի խաչեց, Եանի՝ երկու տակառ եւս բացաւ ... Պօմօնթիի գարեջուրէն, և աչճի Մարտիրոսը չի կրնալով խաւամա հասցնել իր քօնսէնճի յաճախորդներուն, ուրիշ տեղէ մը փոխ տաւ, այնքան շատ էին պէտք է ըսել ցերեկին Բերա ճաշողներու թիւը: Այն Ռեսթօռանը որ հայելի չունէր՝ տուժեց, քանի որ պիտի պիտի ոլորուէին և ըրթարթ քուլթիներ պիտի շտկուէին: Ընդհանուր իրարանցում մը կար գոգցես մեր Սկիւտարցիներուն մէջ, որոնք հեւ ի հեւ դիմած էին Բերա ֆօնսեռը վայելելու համար:

Ա. ԲԼԱՔ

— Միւսիւ Բարսեղ ...

— Օ... դ՞ուք ալ քօնսէն ...

— Հապա, բաթոնս չի պիտի գայ, տոմսակը ինձի տուաւ ...

— Երանի քեզի որ ատանկ ծանրը բոլոր չորպաճի ունիս, ախպար մերինը հիշ բանէ

պակաս չի մնար, չէ՞մշխյէն խօլթուիւր զար-
կածին պէս կը ամպուի ...

— Կերակուր կերա՞ծ ես ...

— Հապա, առնը կերայ ելայ եկայ ...

— Հիշ բան չիյտես եղեր ծօ', ֆօնսէռ
գացողները առջնքն ալ լօքանթան կերան,
երկու հաս ալ ճնկեցինք ...

— Եյ աղէկ, ժամանակ չէ՞ սանքի, հայ-
տէ երթանք ...

— Կեցիր սրտեղէն երկու հաս բուռօ
առնեմ, հոն առէթը ան է քի միջնարարին
դուրս կելլան բուռօ մը կը խածնեն, ծառ-
քերնին ալ բանթալօննուն ճէպը կը խոթեն,
Պէյօղլուցիի պէս սալօնը վեր վար կը պը-
տըտին ...

— Ծօ քսաննոցս երես պիտի ամանէ իսէ,
կուսածն առ է նէ ես ալ առնեմ, ամա խել-
քըս տառցնէ նէ չեմ խառնուիր ...

— Մուխը շատ ներս մի քաշեր, հէմ ալ
հապրուէ պըռթ պըռթ թուք ...

— Ամօթ է ծօ', նասըլ թուքնեմ ...

— Պէյօղլու պիչիմի, ոանկ բերանըդ մէկ
քովիդ ծռէ, լեզուդ դէմ դիր, երկու երեք
անգամ ծըռթ ծըռթ դուրս տուր ...

— Հայտէ նայինք, ամա դուն քովէս մի
դատուիր քի Ֆալցօ մը ընեմ նէ հասնիս ...

Եւ նոյն այդ Պէյօղլու պիչիմի կեղծող
միւսին է որ ծըռթ ծըռթ ուրիշի մը վրայ
թքնելուն հետեւանօք քիչ մնաց բաթ քիւթ
ծեծ մը ուտեր :

Բ. ՈՒԱՔ

Դեռ դռնէն ներս չի մտած :

— Կայնէ քա Սուրբիկ, տա ֆեռմու-
բերդ դնեմ ... սէրսէմ, աճապ ճամբան
քանի հոգի տեսաւ տէ վրադ խնդաց ...

— Հիմա բացուած ըլլալու է, հէմ լա-
յըլը սօյէն բէշս ժողվըտէր էի ...

— Քալեցէք ճանըմ, ետեւնուս մարդ
կուգայ կոր, հիմա սըրա՞ն է կըսէ քավալի-
էնին, որուն քուզալթը վեր թռած էր :

— Ինծի նայէ, ներսը մարդ կը ճաշնա՞ս
ծօ Գարեգին ...

— Ի՞նչ ըսել է, ի՞նչ կայ քի ...

— Հիշ սանքի, մեղի կէօպէկը նստեցու-
նէին տէ աղուոր մը տեսնայինք ...

— Բաղնիքը չենք տուտու, աս թէաթ-
ռօ չէ, մինակ պիտի մտիկ ընես ...

— Եյ պէտքը չէ՞ քի աշքս ալ պան
տեսնայ ...

— Ես ներսը կըսեմ տէ ձեղի չէնային
մօտ տեղ մը կը նստեցունեն ...

— Քա չեկան եռվառանմիշ ըլլան տէ
վրանիս իյնան, ճամպազ ալ պիտի խաղայ
ինչ, անանկ բան մը իմացայ գիտես քի ...

— Հայտէ ճանըմ, ժամուն գաւիթը չենք,
ներս մտէք ...

— Ինծի նայէ Սրբուհի, ներս մտնալնի-
քէն քիչ մը սաղիդ սօլիդ եալքա տուր,
տեսար եմ, ֆոնսէկին կնիկը նասըլ կընէր
կոր նէ ...

— Քա տուտու անիկայ մէջքէն վար սա-
խաթ էր ... :

Ու ներս կը մտնան ձեւով մը, որ կար-
ծես թէ ըսել կուղէին, «մենք պիթթա՞հ կը
գտնուինք կոր ասանկ տեղ մը, ֆախաթ
կուսածնիս ալ տեղն է ...» :

Գ. ՈՒԱՔ

— Ինծի նայէ միւսիւ, անկաճա քիչ մը
ծանրը կը լսէ, աշքէս ալ ղօռ ունիմ, ամա
դարար չունի կէօղլուկս հետ է, ինծի մօտ
տեղ մը ցուցունէիր ...

— Շատ լաւ մայրս, հրամանեցէք ըսելով
տիկինը կառաջնորդեն ...

— Քա ինչտար ինսան, վայ մեղքիս,
գիտնայի նէ կոնս բէշս կը հագնէի ... քա
գուզում եալքուս, անէքի աստար խալա-
պալըս պիտի ըլլար նէ ինչո՞ւ պիլէթին մէջը
չէիք գրեր քիմ վրանիս կոխնիս շտկած գա-
յինք, կետինին տիպը կասնիմ կոր նէ ...

— Հոգ չէ տիկին մայր, ձեզի համար
մարդ չամօթեր, դուք տարիքնիդ առած էք ...

— Տարիքս առած եմ ամա՞ սիրտիս խու-
չիկը տա՛նա ճըվըռ ճըվըռ է, նայէ աս հա-
լովս ելայ եկայ՝ քի խաթըր մընայ չըլլայ
տէյի, հէմ ալ աղուս հետ տամա մը գտնուի
տէյի ...

— Շատ լաւ, հոս նստեցէք տիկին, կը
յուսամ թէ հանգիստ կընէք, ըսելով նըբ
հիւրամիժարը պիտի բաժնուէր մօտէն, յան-
կարծ կը կանչէ,

— Աֆ կընես եալքուս, մէկ երկու հատ

քիպրիթ ունի ... սիկառայի թիրեաքի եմ տէ ...

— Արքիւղւած է տիկին, քօնսէռի մէջ չեն ծխէր ...

— Քա չէ' ... կէսուրս ալ քանսէռ ունէր ամա քըսըր քըսըր կը խմէր ...

Դ. ՈՒՍՏ

— Պետրոս ... ներս մտած վախիթնիս մեղի նայող կար ...

— Բիւթիւն, բիւթիւն, սէպէքի ամենուն աչկը վրանիս դառցաւ ...

— Էյ հէլալ ըլլայ առած փարան, աղջիկը երկու ոսկի առաւ ամա, քուրա դառցուց ...

— Սուս եղիր, եանի իմինս ալ աս օրին չի հասնէր նէ խոսէս պիտի նստէյի լայի ...

— Նայէ քեզի չըսի', բիւթիւն պուանիւրով եկեր են, հիմա անանկ սագ չիգայ ...

— Հա' ամա, մերիններն ալ բէք սմքեր էն, մէյէր ինչ կընեն եղէր գիտե՞ս ... աղը կրակը կը ձգեն տէ, վրան կը բռնեն եղէր, բիւթիւն թիւյրը խապառ խապառ կուգայ եղէր ...

— Օ'խ ... բէք աղուոր տեղ նստեցանք, ամա շաքխայէս պէօհիւղիւր եմ, գիտես քի խօճա պօխճա մը կայ թէփէս ...

— Էրիկ մարդիկ ինչ աղէկ են, տաք-նայնուն պէս ֆէսէրնին կը հանեն ծառքեր-նին կը բռնեն կոր, մենք իսէ թային հէլվա-ճիններուն պէս հէլվաէն պիտի տիւզ գլոխնիս պիտի կրենք ...

— Նայէ', Բեքոճենք լօճա են նստէր, հագար անգամ Պետրոս աղային ըսի քի քա-նի մը զրուշ էվէլ տուր տէ մենք ալ լօճա մը նստինք տէյի ...

— Քա ճանըմ ինչ պիտի տիւզ մախառայի պէս կը խօրաթուիք կոր ... կըսէ ամուսինը, բիւթիւն ձեզի կը նային կոր ...

— Քա ան խօրաթանուս համար չէ, զը-լոխնուս շաքխային կը նային կոր, փարոնս տուինք ամա, տիւշման չաթլատան շաքխա-նեղու ալ տէր եղանք ... թող նային տէ հոսկնան Իսկիւտարին կուստօն ...

Ե. ՈՒՍՏ

— Լուսերուն մէջը պառկի ան ժարդը քի ասանկ ֆիտանի պէս պօյ պօյ աչկերսներ

հասցուցեր է կըսէ Սկիւտարցուհի տարեց-մը, bien entendu :

— Տուտու անոնք Պէրպէրեանինները չեն, Կեղրոնականին աչակերտներն են ...

— Տէր ողորմույ, զանէր աստար ցըն-թած եմ ... Պէրպէրեանին սարգեւարալ-խութիւնը չէ' ասոր, անանկ չըսիք ...

— Չէ' ճանըմ, Պէրպէրեանին ինպիսա-քօնսէռ նուադանդէս, աս սղաքնալ լք-ռամ տէրի եկեր են ...

— Էյ, Աստուած մօրերնուն պաղըլամիշ-ընէ ամա, տա ծարի կեցողը ինտոր կէշ կէշ կը պողայ կոր, վայ մեղքիս, ես քի քիշ մը ծանրը կը լսեմ նէ' կիւմպիւր կիւմպիւր էօթ-սիւրմիւշ կընէ կոր խուլախ թօղիս ...

— Պասօ կըսեն անոնք, անոնց ձայնը ու-ժով պէտք է որ ելլայ ...

— Աղէկ ամա, հիշ տէյիլ իսէ ողորմած հոգիին կէս սուգը խաթրը նայէին տէ ճան-կըռ ճակըռ չի պօռային ...

— Յրէնքը անանկ է որ տեղ տեղ պո-ռան, դուն մինակ մտիկ ըրէ տուտու, երեք-ձայնով կ'երգեն կոր ...

— Քա հա' ... Ղալաթիայի Ժամուն տի-րացունները չըլլան ... հա' անանկ ըսէ, քա-պարէ ասոնք ողորմած հոգիին մեռելին առ-ջեւէն ալ գացի՞ն ամապ ... Ան չէ ես ճուր մը պիտի խմեմ ամա նասըլ ընենք որդտի ...

— Քիչ մը համբերէ, հիմա դուրս կել-լանք կը խմես ...

— Աստար գէնկինին մէջէն ֆարաղա-մէկն ալ էլլար տէ երկու ֆըլի ճուր հոգուն համար սըտեղը դնէր զեպիլ տէյի ամէն մարդ-խըմէր տէ ողորմիս հանէր ...

— Մեռելոցին գերեզմանատունը չենք տուտու, խելքդ գլուխդ ժողուէ ...

Զ. ՈՒՍՏ

— Արեւը սիրեմ, Սինանհան Արթինիկա նայէ, պօյը սիրեմ, բիանօին առջին նստեր է նէ, գիտես քի թէք թաշ բուլանդի մըն է կըսէ Բերացի տիկին մը, որ Բանկալիի կողմերը կը նստի, ոճէն կուհելի :

— Սուս ճանըմ, հիմա լսողը ինչ կըսէ...

— Ի՞նչ կուզենք ըսեն, կա՞յ բխացային վրայ. անոր պէս զարնող մը ...

— Մարդիկանը իշտէ, մէյտան կարգաց...:

— Ետլմա եօգ ... անկրծակներու եկուտէ պոչը խըվըռմիշ ընելուն պէս պապանծեցաւ ...

— Նէ իսէ, սուս եղիր տէ մտիկ ընենք...:

— Քա պէտքը չէր քի սա տղան մեր նուարդին ընէինք ..., սէրսէմ ենք քա սէրսէմ ...

— Սո՛ւս ... նայէ ի՞նչ անուշ կտոր մը կը վարեն կոր ...

— Սանքի ես ալ ատ դործին մէջը թուլ գտնուեցայ ես' ... նէ իսէ ...

— Մըտիկ ըրէ, բիւթիւն մեղի կը նային կոր ...

— Քա ան նայողները Սկիւտարցիները ըլլալու են, Պէյօղլուցի ենք ես, մեղի կը նային կոր քի, շաբխայի, խումաշի կուստո սովրին տէյի ...:

Է. ԲԱՍՔ

— Ի՞նչ Սուքիա՞ն ...

— Է՛յ ...

— Սուռաթ չուզէր ծօ', ան աղջիկը ո՞վ էր քի առջին ոլոր ոլոր գալով պերիւր նըստեցուցիր ...

— Քեզի՞ ինչ ...

— Նասըլ ինծի ի՞նչ, աչքիս մէջը կը նայիս կոր, հէմ դուն մէկ տոմսակ ունէիր, անոր տոմսակը ինտո՞ր պէճերեցիր ...

— Ծանըդ կտրէ տէ մտիկ ընենք ...

— Նա ծօ', տիք տիք քեզի կը նայի կոր զավալըն ...

— Հիմա քովէդ պիտի ելլամ հա՛ ...

— Հա ես քովէս ելիր տէ անոր քովը գնայ, ծօ՛ Աստուած վկայ Հաքաղիսալին կըսեմ, նայէ հոն նստեր է, նիւթ կը մուրայ կոր ...

— Ով կը վախնայ թող գրէ, նոր գրածը չէ՞ ես ...

— Քեզի բան չըլլար ամա, աղջկանը նամուսին կը գպչի, չէնէ ինծի ալ բռնեցանք ըրէ քի չըսեմ ...

— Նայէ ինչ աղուոր կը չալեն կոր ծօ', տուղուսըգ ... պարէ փարասըգ եկերես նէ տըրիշներն ալ մի խանգարէր ...

Եւ իրաւունք ունէր ըսելու:

Ը. ԲԱՍՔ

— Գուզում աղաներ, աղաս մատամասնե՞րս են ... կը հարցնէ սպասուհի մը թատրոնին դուռը կեցողներուն:

— Քու աղադ մատամադ ո՞վ են, ի՞նչ եան կըսուին ...

— Պէրպէրեանին չալըն հոս չէ՞ ... մեղայ իշտէ հոս եկան ...

— Աղէկ, բայց մենք ինչպէս գիտնանք ո՞վ ըլլալին, հազար հոգի կայ ներսը ...

— Քա ճանըմ, մատամաս ըսաւ քի, ինծի թէնպի՛ն ըրաւ քի, սահաթը տասնին վախիթները քիւրք բէլուս բեր տէյի ...

— Էյ մեղի տուր տէ մենք հասկնանք, կուտանք ...

— Չըլլար, անիկայ ինծի թէնպի՛ն ըրաւ քի, խալապալըին մէջը բեր ինծի տուր տէյի ...

— Էյ մենք ալ գաղտուկ տեղը չպիտի տանք ..., բայց անունը ի՞նչ է ...

— Էտալը եոսմա կէնճ մըն է, սառըի վրայ, միստ ...

— Էյ հիմա մենք չենք կրնար քեզի ներս ձգէր, ներսը բան կը վարեն կոր ...

— Տահա աղէկ, ես ալ ատ բաթըռտըրն սըվըլմիշ կըլլամ կուտամ ...

— Չըլլար կընիկ, սանկ մէկ թառափ կայնէ, նայէ հիւր կուգայ կոր ...

— Ի՞նչ կըսես կոր, աղաս իլէն մատամաս շաբաթ մը թամամ իրար կերան քի իլլէ աս օրին առնուի աս սուղնոց քիւրքը տէ էք ալէմը տեսնայ տէյի, աճէլէուլ ելան եկան, ինծի թէնպի՛ն ըրաւ քի օյինին կիսուն բեր վրաս տուր տէյի ...

— Կընի՛կ, մենք զբաղած ենք, չենք կրնար քեզի հետ ժամանակ անցնել ...

— Դուք պողած էք նէ հէլպէթ մատամաս ալ պաղած է, հէմ անոր նէվաղիլը իլէն օսկոռներուն ցաւը ձերինը չըլմանիր ... բէք ծանրը կիշնայ ...

Միջոց մը քիւրքիլ քիւրքիցը ամբողջ թատրոնին շրջանը ընելէ վերջ՝ որին կռնակը կուգէք որ թառի ... վաճառատան մը պոշտօնեային կնկանը:

Ահա թէ ինչո՞ւ մենք մարդ չենք ըլլար ...:

Թ. ՌԱՍԻ

— Վրաս լեռնային եկաւ, սըտեղէն մէյ մը դուրս ելլայինք ... կըսէ Տիկին մը սրիս սրիս վիզը դրած պուան կռնակն ի վար հըրելով, հիշ չի գիտցած կտորներս ճըզ ճըզ ճըզ ... սուգ բաներ ...

— Ի՞նչ կըսէք տիկին, ամբողջ զարկածնին բարձր մօռսօներ են, հիշանալի ...

— Աման հիմա ելլամ սըտեղը Իվանովի չին Թուաով վալսը զարնեմ, նայէ ինտոր ամէնուն աչքը կը բացուի ...

— Աղէկ, բայց գիտնալու էք որ Սինան եան եղբայրները այդ տեսակ քըցըրուի բաներ չեն կրնար զարնել, ժողովուրդը մեծ հաւատք ունի իրենց վրան, և պէտք է արդարացնել ...

— Որի ... ասոնք չեն մի մտիկ ընողները, սանկ մէյ մը աչք պտըտցուր, ինքզինքս մայիսի օրով Չամլըճային լեռը կը գիտնամ կոր, մէկ տօլմային թչնճիրէն պակաս է, ասոնք ի՞նչ կը հասկնան քի ...

— Իրաւունք ունիք, բայց քօնսէսի մէջ վալս չի զարնուիր տիկին ...

— Աս մօնտով ալ քօնսէս չըլլար պարոն ...

Իրաւունք ունէր:

Ժ. ՌԱՍԻ

— Ոտքդ պազնեմ տղաս, տահա շատ կայ աճապ, տուն երթամ տէ տղուս կռնակին աղով իլիմօն պիտի քսեմ, կըսէ կին մը մօտը կեցող հիւրընկալի մը ...

— Ձէ տիկին, երկու նիւմէոս եւս, և ահա կը վերջանայ ...

— Ինձի նայէ եավրում, ան աղուոր տըղայ մը ելաւ տէ այսպ կէօրմէտիկ սաղլամ ծանով ֆռէնկէ մանի կանչեց նէ կարգած է ...

— Ո՛չ, ի՞նչ կայ որ ...

— Էկէր հետը ախպապուլին ունիս նէ քսէ քի Թագուկին ծառքին տակը մարտ բիլիճի մը կայ եղէր տէյի, ան ալ ծանի մէռազլը է տէ ...

— Ներեցէք, ինձի կը կանչեն կոր, ըսելով՝ կը հեռանայ մօտէն, մինչ կինը ինքնիւրին,

— Աղէկ օր աղջկանը անունը չի տուի, եանի աս ալ ծառքէս երթար նէ ...

X

Երեկոյին ուշ ատեն երբ կամուրջէն կանցնէի՝ ճոխ հագուած ընտանիքի մը մէկ անդամը սա կարծիքը կը յայտնէր:

— Միւսիւ Բարսեղենց սուռուէին ասկէ էվէլ էյլէնմիշ չեղանք քա Ուսկուկ ...

Ո՛ր սիկիմներ եւ օրիորդներ քեեւ հագուիք նոյն ու շիք

Սակայն նաեակ ըսուածն՝ ձեր մեջ ... բնոր կերպով բնաւ չիք:

ԼԻԼԱ

ՍՏԱՅԱՆՔ

ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐԱՐԴ ԴԱՐ

Ե Ի

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՐՈԴՍԱՅԻ ՏԵՐՈՅԵՆՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ — Յ. Գ. ՄՐՄՐԵԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ — ԶԱՐԴԱՐԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Սոյն գեղեցիկ և ճոխ հատորը՝ որ կը ծախուի ի գին 12 1/2 դրուշի, հարկ անհրաժեշտ է որ ամէն գրասէր ունենայ հատ մը, մօտէն տեղեակ ըլլալու համար Տէրոյնցի կեանքին շրուագներուն, ինչպէս նաեւ Յ. Գ. Մրմրեանի ոճին և մեկնարանութեան անուշութիւններուն:

◆◆◆◆◆

ՆՈՐ ՏԱՂԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ


ՄԻՍԱԲ ՄԵԾԱՐԵՆՑ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ—ԳԼԸԾՃԵՆ ԳՐԱՏՈՒՆ

Երիտասարդ բանաստեղծին այս երկրորդ երկը՝ ՆՈՐ ՏԱՂԵՐ, անգամ մ'ալ կուգայ հաստատել հեղինակին կարողութիւնը, զգացումը և թռիչքը, երեք փնտռուած առաւելութիւններ ի մի ցուլուած մէկ սրտի և մէկ մտքի մէջ:

Զերմապէս կը յանձնարարենք այս գողտրիկ հատորը, ամէն անոնց՝ որոնք զգայուն գրուածքներէ համ կառնեն:

Գին 5 դրուշ



ՈՒՐ ԱՄԲԱԿՈՒՄ
ՅԱՐՈՒՅԵԱԼ Է
Ի ՄԵՌԵԼՈՅ

Ամբակումի դադաղը, ինչպես Համբաղի-
սակի զուարթասէր ընթերցողները ու ունի-
ները անցեալ շաբթու տեսան, որ քառաձի
մեռելակառքով մը և ետեւէն բազում կառ-
քերով մեկնեցան դէպ ի Պալլաքլը, որպէսզի
յանձնեն զայն... իր քնտանեկան դամբարա-
նին:

Գերեզմանատուն հասանք և Ամբակումի
դադաղը հանգստաքարին վրայ դրին զգու-
շութեամբ, որպէսզի... անոր քունը չ'ելան
խռովեն:

Մենք ալ կեցանք հոն և շունչ մը առինք:
Ձայն ու շշուկ չկար:

Մինակ, գերեզմանատան խորհրդաւոր...
չեֆեմպիճի ծառերը ձայն կը հանէին... մեր
լուսթենէն օգտուելով:

Ատեն ատեն, բը'թ, բը'թ, բաներ մը
կ'իյնային ծառերէն, ետքը ապահովեցինք
որ չեֆեմպիճեհըն էին, որոնք պատիւ մը
ընելու համար վա՛ր կ'իյնային, ինչու որ
հանգուցեալը իր մանկութեանը չեֆեմպիճի
ծառերէն վար չէր իջնար:

Բայց սո՛ւս... ձայն մը ահա...

Թը'ք... Թը'ք... Թը'ք...

Այս Թը'ք Թը'քը (որ Վ. Վրդ. Պարտի-
զակցիէն առնուած է) քանի մը յուզարկա-
ւորներու գարշապարները վեր առնել ու
չուել տուաւ. անոնցմէ ապահովաբար այդ
մարդիքը, որոնք ուրուականի վրայ բաւա-
կան տեղեկութիւն ունին. խեղճերը չեն գի-
տեր թէ՛ արդէն իրենք մէյ մէկ ուրուական-
ներ են... անբարոյականութեան:

Երկրորդ ձայն մը՝ այս անգամ աւելի
յստակ...

Թը'ք, Թը'ք, Թը'ք...

Մէկը, որ աւանակի պէս ականջներ տըն-
կած էր մինչեւ այն ատեն՝ առաջ անցաւ:

Գիտուն մըն էր այս, որ իր ձեռքերը
բարձրացուց Բողոքական քարոզիչի մը պէս
և աչքերը հաւկիթի դեղնուցի մը պէս բա-
նալով պոռաց.

Էլբէքա՛, Էլբէքա՛, Էլբէքա՛...

— Համմէ՛, ըսաւ մէկը...

— Սա մարդուն խելքին եկած չ'ըլլա՛յ
ըսաւ երկրորդ մը որ... խենդերէն կը վախ-
նար:

— Հիւանդանոց նետելու է, ըսաւ ուրիշ մը
որ... Հիւանդանոցէն կը վախնար... հոն
ինչալէ, քանի որ հետեւեալ օրը՝ աչքերը
փողոցին մէջ պիտի բանար...

Էլբէքա՛ պոռաց նորէն գիտունը, հանն-
լուկը լուծուած վերջապէս, ինչպէս զիտէք,
ըստ Ֆլամմարիոնի որ՝ Մարտ մոլորակին բնա-
կիչներն, մեզի հետ յարաբերութեան մտնե-
լու սէվտայով... Թոքախտ ըլլալու վրայ են,
այո՛, ահա հո՛ս է որ մեզի պիտի յայտնուին,
աճապարենք պէտք եղած նախնական...
դարմանները ընելու համար:

Եւ գրեթէ ուրախութենէն խենդեցած՝
առաւ քալեց փ ի լ ի պ ո ս ա Ֆ ի լ օ ս օ Ֆ օ-
ս ր...

Հազիւ թէ գիտունը գացած, ահա դա-
գաղին կտփարիչը հազար ու մէկ կտոր կ'ըլլայ
ու Ամբակում կ'երեւայ, չորս կողմը կը նա-
յի և մինակ զիս կը տեսնայ, ինչու որ միւս-
ւերը լեղապատառ փախեր էին արդէն:

Սոսկումով մը զինքը կը դիտում:

Երեք բանի համար ողջնցայ, սիրելի
Անմուռուկս ըսաւ ժպտելով, երեքն ալ կա-
րելոր բաներ:

— ...

— Առաջինը, եղբա՛յր, ծուռ գամ մը
դադաղին մէջը բաւական անհանգիստ ըրաւ
զիս միշտ միսս մխուելով և եթէ զայն գա-
մող աւանակը հիմակ առջեւս բերեն, ա-
ռանց բաժանում գիտնալու զլուխը երկու-
քի կրնամ բաժնել:

Երկրորդ. սա գիտունը ըսուած կովու-
ղեղային կենդանին ո՞ր ծակը մտաւ, ծօ՛-
թող Հիւանդանոց խրկէիք տա աւանակը,
ծօ՛ Մարտ մոլորակին բնակիչները ո՛ւր,
Ֆլամմարսոնը ո՛ւր, առ եօեֆ հեքիճը ո՛ւր:

Երրորդ. միտքս հանելուկի պէս բան մը եկաւ և նայիմ պիտի կրնաս լուծել. մտիկ ըրէ տղա՛ս. նախ անհուն շնորհակալութիւններս ըրած յուզարկաւորութեանդ համար, ծօ՛ մեր ջոջերը մեռնին նէ ատանկ կընեն, ծօ ետման ես. . . . Հիմակ մտիկ ըրէ և Հանրագիտակի սիրաորոտրդաշուք ընթերցողներուն և սրտադիւրաբեկ ունիներուն ալ ըսէ որ մտիկ ընեն:

Վարպետ պարտիզպան մը, բերրի ու պարարտ հողի մը վրայ քանի մը ամիսներէ ի վեր ծառ մը անկած էր. հիմակ այդ ծառը պտուղներով բեռնաւորուած է, և կը վրստահեցնէմ ձեզ թէ՛ այդ պտուղները ա՛յլ հասունցած են: Պարտիզպանը իր չնաշխարհիկ կարողութեամբը, ծառը անանկ մը պատուաստած է որ՝ ծառէն կախուած ամէն պտուղ զատ զատ համ ու հոտ ունի: Մօտ տաննէն պարտիզպանը կողովներու մէջ զընելով ծախու պիտի հանէ եւ ամէնքդ վրան պիտի իյնաք: Ի՜նչ է ասոր լուծումը...

— ...

— Աղէ՛կ աղէ՛կ, կը խնայեմ մտքիդ անկիւնները սլաքաւմներ ընելէ...

Մտիկ ըրէ, ահա լուծումը:

Վարպետ պարտիզպանը՝ ԹէՆՈՒԻԿԵՆ Է — «խաղցրախօսիկն թեողիկ» — եւ ակնաւորուած ծառը ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ ու պրտուղներ՝ Տարեցոյցին ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ: Հա՛ մոռցա՛մ, ծառին տակի բերրի ու պարարտ հողը՝ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ հարազատաց կազմակերպեալ ՏՊԱՐԱՆՆ Է. իսկ կողովները մեր ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐՈՆ խանութները, որոնք արդէն բանի մը օրէն, իրենց ցուցադրութիւնն ետեւէն ձեզի պիտի ցուցնեն:

Ահա այս ըսելով դադարէն դուքս ելաւ Ամբակում եւ արդէն հագուած պառկած ըլլալով, թեւ թեւի մտանք ու ճամբայ ելանք:

Ամբակում ուղեց որ Յունաց եկեղեցին երթայ: Գացինք: Թաւ մը ալիազմայի ջուր խմեց բարեպաշտօրէն ու կառք մը նստանք ու սուրապինք. ճամբան ըսաւ Ամբակում,

— Ըսէ ընթերցողներուս որ շախա ըրի:

ՎԵՐՋ ԱՄԲԱԿՈՒՄԻ ԽՕՍԲԵՐՈՒՆ

ԱՆՄԵՌՈՒԿ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒԻՐԵՐ

ԲԸԹԻ-ՇԱՆ. — Պէրպէրեան քօնսէֆին ներկայներուն մէջ ամէն ոք... ի յարգանս մեծանուն Ուսուցչապետին, մէկ ոսկի օթեալի գին տալով հանդերձ ՀԱՐԻԻՐ ԲՍԱՆ ՈՍԿԻՆՈՑ մուշտակապատ բալթօ իմը հագած ըլլալին կիմացնեն: (Աւելի պատշաճ է՞ր այդ ծանր (.) ապրանքը օթեալին մէջ եփեմք մը կախել ի տես և ի ցոյց ամէնեցուն. Ծ. Խ.):

ՍԿԻԻՏԱՐ. — Անցեալ օր Ս. Խաչ եկեղեցին գտնուող մասոս բայց մակոտ տիկին մը չի կրնալով տոկալ տիրող ցուրտին, ժամկոչին հինգնոց մը տալով՝ մանկալ մը դնել տուեր է պահարանը: (Դրամ տալ չուզող եփօցմիսքներէն կը խնդրուի ածուխը հետերնին բերել. Ծ. Խ.):

ԲԵՐԱ. — Ամբան տաք եղանակին բացօդեայ տեղեր սիրաբանող զոյգերը ներկայ ցուրտներուն որոշած են Պօն Մառչէի տաքուկ սրահը չափիփել: (Պառթօլի եղբայրաց ուշադրութիւնը կը հրաւիրենք. Ծ. Խ.):

ԴԱՏԸ-ԳԻԻԴ. — Հոս գիշերային զբօսանքները սկսան ընտանեկան չրջանակներու մէջ, այս տարուան նորոյթն է երկրիւք քիմսէն, որ մեծ խրախճանութեամբ կանցնի: (Փիսի փիսի բամպուղին ալ մի մոռնաք Ծ. Խ.):

ԱՏԱ-ԲԱԶԱՐ. — Ստոյգ աղբիւրէ կիմանանք թէ Հանրագիտակի ինքնակոչ գործակալ Ռուբէն Սարգեան մտադիր է փոխել մը տարբել իր պարտքը վճարելու համար, տոմսակները արդէն սկսած են սպառիլ. դիմել առաւ փախաւ փողոց 100 թիւ:

ՈՍԿԵՐՉԱՑ ՇՈՒԿԱՑ. — Փեսացուին փողկապի գնդասեղ մը գնել ուզող տիկին մը, անցեալ օր հոս երբ ապառիկի վաճառատունը կը փնտրէր, իրեն իմացուցին թէ՛ նոյն այդ խանութը ժամանակի մը համար այդ գործը չպիտի ընէ եղբր: (Մեզի ալ տանկ պատասխանեցին Ծ. Խ.):

Արտօնսէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասցէսի քիւ 52.

ԱՐՍԵՆ ԼԻԻԲԵՆԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՅ ԿԻՆԸ

— Պիտի ճաթին խնդալէ :

— Բայց անգամ մը նայիմ, թերեւս գաղտնի ելք մը կայ այս տունին մէջ :

— Վիլսոն, մինչդեռ դուն կը ննջէիր, ես քնակարանը վերէն վար նայեցայ : Ա՛հ, իմ բարի Վիլսոն, Արսէն Լիւբէն որս մըն է ու յուն բռնուկը սովորութիւնը չենք գիտեր : Դր ետեւը բան մը չձգէր անիկա ... եթէ սակայն, յարեց Հէրլօք Շօլմա, առ 1884 տարւոյ Շաթօ-Պէրլիքէթի գինիի չիշը, որ փոշոտած ու մամուկի թելերով պատած է :

Շիշը առաւ և իր գրպաններէն մէկին մէջ խօթեց, ու վանդակապատին մօտենալով, հոն գտնուող երկու ոստիկանները կանչեց :

* * *

... Ժամը տասնըմէկին, Հէրլօք Շօլմա և Վիլսոն աղատեցան և առաջնորդուեցան ամէնէն մօտակայ պահականոցը, ուր ոստիկանակեց, լրջօրէն հարցաքննելէ ետքը արձակեց զանոնք :

Կտոք մը, զանոնք մինչեւ Էլիզէ-Բալաս պանդոկը տարաւ : Վիլսոն իր սենեակին բանալին ուզեց :

Փնտռուողքէ մը ետքը, դո՛ւսպանը զարմացած պատասխանեց .

— Բայց, պարոն, ձգեցիք այդ սենեակը :

— Ե՛ս, ինչպէ՛ս ...

— Այս առտուան ձեր զրկած նամակովը որ ձեր բարեկամը մեզի բերաւ :

— Ինչպէ՛ս բարեկամ ...

— Ահա այն պարոնին այցաքարդը զոր նամակը մեզի յանձնեց :

Վիլսոն այցաքարդը առաւ, իր այցաքարդներէն մէկն էր, և գրութիւնը ճիշդ իր գիրովն էր : Անձկալից հարցուց :

— Եւ մեր սնտուկները ...

— Բայց այդ ձեր բարեկամը սնտուկները տարաւ ...

— Ա՛հ ...

Երկուքն ալ մեկնեցան :

Ճամբան Հէրլօք ծխախողը վառեց :

— Ձեզ չեմ հասկնար Շօլմա, աղաղակեց Վիլսոն, այս պահուս ձեզի մուկի մը տեղ դրած հետերնիդ կը խաղան ու դուք ձայն չէք հանէր :

— Վիլսոն, քու այցաքարդիդ վրայ կը մտածեմ ...

— Ետքը ...

— Ահա մարդ մը, որ մեզի հետ կուի մը նախատեսած, հայթայթեր է թէ՛ ձեր և թէ՛ իմ գրութենէն նմոյշներ, և միշտ պատրաստ ունի իր դրամապանակին մէջ ձեր քարթերէն հատ մը : Կը մտածե՞ս, ասիկայ կը ներկայացնէ իր զգուշութիւնները, իր ունեցած կամքը և բռնած մէթոտն ու կազմակերպութիւնը :

— Այսինքն :

— Այսինքն, Վիլսոն, ասան՝ հզօրապէս զինուած հակառակորդի մը հետ կուեկու և յաղթելու համար ... պէտք է ԵՄ ըլլամ : Եւ անա ինչպէս կը տեսնես, Վիլսոն, առաջին հարուածը վրիպեցաւ :

Ժամը 6 ին, էֆօ քը Ֆրանս լրագիրը իր իրիկուան տպագրութեան մէջ, հետեւեալ հատուածը կը հրատարակէր :

« Այս առաւօս, Պ. Թեմաւս, քսանըվեցերորդ քաղապետութեան ոստիկանապետ, ազատ արձակեց Պ. Պ. Հերլօք Շօլմար եւ Վիլսոնը, որոնք Արսէն Լիւբէնի ձեռնով փակուած էին՝ հանգուցեալ Պարոն Տ'Օրուաի բնակարանին մէջ, ուր արդարեւ աղուր գիշեր մը անցուցին :

« Ասկէ զատ, քեթեցած իրենց սնտուկներէն՝ Արսէն Լիւբէնի դիմ բողոքեցին ...

« Արսէն Լիւբէն, որ այս անգամուան համար պզօիկ դաս մը տալով գոհացաւ, անոնցմէ կը խնդրէ որ, աւելի ծանր միջոցներ ձեռք առնելու չստիպեն զինքը ... » :

— Պահ, ստահակութիւններ, յարեց Հէր-
լօք Շօլմա, այս մարդուն մէջը ստահակ մը
կայ:

— Այսպէս ուրեմն, Հէրլօք, միշտ մի
և նոյն հանդարտութիւնը:

Այո՛, միշտ մի եւ նոյն հանդարտութիւնը,
կրկնեց Շօլմա շեշտով մը, ուր կը մրմռար իր
ամենաստակալի բարկութիւնը: Ինչո՞ւ բար-
կանամ, քանի որ, այնքան վստահ եմ վերջին
եկը ձեռք անցնելու:

Դ. — ՔԱՆԻ ՄՐ. ՆՇՈՅԼՆԵՐ ՄՈՒԹԻՆ ՄԷՋ

Հանգիստի պէտքը, հագուստներու գնու-
մը, և իր հակառակորդին հետ կռուելու հա-
մար պատրաստելու պատշաճ ծրագիրը, ա-
սոնց ամէնքը առիթ տուին, ինչպէս որ Հէր-
լօք Շօլմա նախատեսած էր, կատարելապէս
օրուան մը կորսուելուն: Հետեւեալ օրն էր
ձր սկսաւ իր զննութիւններուն:

Երեք երկար տեսակցութիւններ ունեցաւ.
Ա. — Փաստաքան Պ. Տէթինանի յարկա-
բաժինը զննեց, ամենափոքրիկ մանրամաս-
նութիւններովը: Բ. — Քոյր Օկիւսթի հետ,
որ վիզիթանդիսթներու մենաստանը քաշ-
ուած էր: Գ. — Սիւզան Ժէռպուարի հետ
վերջապէս, որ Բարիդ կը գտնուէր, և զայն
հարցաքննեց խառնատեղի կնոջ վրայ:

Յետոյ զբաղեցաւ երկու կաշուածներով,
որոնք կը շրջապատէին Հանրի Մաթթէն ծա-
ռուղին բնակարանը: 132 թիւին վարձա-
կաներէն և ոչ մէկը, Բարիդ կը դառնար
Հոկտեմբերէն առաջ: 136 թիւին դռնապանը
հարցաքննեց, որ իրեն պէտք եղած բացատ-
րութիւնները տուաւ:

Այս տեսակցութիւնէն ետքը, Հէրլօք չոր-
րորդ յարկը ելաւ և ընդունուեցաւ Մէն-Տը-
նիլի մեծ արհեստաւորէ մը՝ Պ. Տալպրէթի
կողմէ և որուն իր այցելութեան նպատակը
յայտնեց:

— Երկու խօսքով պարոն, եզրակացուց
Շօլմա, կը ճանչնաք սա 1884ի Շաթօ Պէլ-
լիքէթի գինիի շինը:

Պ. Տալպրէթ պատասխանեց:

— 1884ի Շաթօ Պէլլիքէթի գինին ու-
նի՛մ, որոնց շիշերը ճիշտ նման են ասոր,
բայց ինչպէս կրնամ հաստատել որ աս ի-
միներէս է:

— Քանի հաւ ունենալնիդ չէ՞ք գիտեր:

— Այո, և արդէն դիպուածն է որ դոր-
ժածել կուտայ: Առջի օր ճաշի քանի մը բա-
րեկամներ ունէի, և ես ինքս անձամբ Շաթօ
Պէլլիքէթի երեք շիշերը վեր առի, ոչէտք է
որ երկու հաւ մնացած ըլլայ ճաշասենեակին
դարանին մէջ, եթէ կուզէք ապահովենք:

Շօլմա անոր ընկերացաւ: Գարանին մէջ
երկու շիշերը գտան, վաթկենական քննու-
թիւնէ մը ետքը, Շօլմա մէկ հատին խիցը բա-
ցաւ համը նայեցաւ և պոռաց իսկոյն.

— Կասկած չկայ, փոխեր են գինին...

— Անկարելի, խիցը անեղծ է, պիտտին
է որ փոխած են. «Շաթօ Պէլլիքէթ» պի-
տակ մը փակցուցեր են առաջին եկած շիշին
վրայ:

— Ո՞վ:

— Ձեր ծառաներէն մէկը:

— Խոհարար մը ունիմ որ հինգ տարիէ
ի վեր քովս է, գալով սենեակի ծառայիս,
տարի մըն է կը ծառայէր, և շատ դո՛ւ էի
իրմէ...

— Ձեզմէ մեկնեցաւ ուրեմն:

— Այո:

— Ե՞րբ:

— Երէկ:

— Եւ ի՞նչ պատճառով:

— Հեռագիր մը առաւ, մայրը հիւանդ
է եղեր:

— Իր հասցէն ձեզի ձգեց:

— Ո՞չ:

Հէրլօք մեկնեցաւ Պ. Տալպրէթէ: Դուր-
սը վիլսօն իրեն կ'սպասէր, Հէրլօք անոր մօ-
տեցաւ և ըսաւ, իբր թէ վիլսօն իր տեսակ-
ցութեանը ներկայ գտնուած ըլլար:

— Հետքը լուրջ է... այդ շիշը, սպա-
սաւորին յանկարծական մեկնումը...

— Հետքը արդարեւ լուրջ է, յարեց վիլ-
սօն, ինչպէս մէկը որ ինչի վրայ խօսելիքը
գիտէ:

— Բայց չմոռնանք որ, Պարոն Տալպրէ-
թի յարկաբաժինը չորրորդ կարգին վրայ
կանգնուած է, այսինքն, Պարոն տ'Օթուա-
յին բնակարանէն մեթրոներով հեռու, հետե-
ւաբար եթէ գաղտնի անցք մը գոյութիւն
ունի, կրնայ ըլլալ հոն... ուր կենթադրեմ:

— Անշուշտ մրմռաց վիլսօն մտախօս:

(Շարունակելի)

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՁԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Հատան, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ եւ գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
եւ տղայոց շիք եւ գիմացկուն փոքրիկ
ներու ճոխ միտերք մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—12



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեպոյ պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյրանէ,
Ջիւսասանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
թոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷՋԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին	50 լր.	Վեցամսեայ	25 լր.
Գաւառաց համար	» » 54 »	» »	27 »
Արսասանման	» » 12 ձր.	» »	6 ձր.


Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՑԷ՝

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ, Պապը-Ալի հասեհի Ասասուրեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան եւ
թէ միշտ նոր բաժանորդներու անունին եւ հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է շրջուին կամ Օսմ. Մանտաքոսթով եւ կամ բոսթայի փութով 20 հաս-
20 շրջուի հաշուով:



Վեցամսեայ ՆՈՐ բաժանորդ գրուողին, թէ թերք պիտի տրուի եւ թէ այսպիսի
տեղի վրայ իր ազգաբնակիցներ պիտի դրուի ՏԱՍՆ ԱՆԳԱՄ, իոյ տարեկան
գրուողին՝ ԿՐԿԻՆԸ նոյն պայմաններով